ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 19.05.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԱՄ-2017/02

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «Մեծ Հիմք» ԱԿ-ի կողմից 04.05.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2017/02 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1.<u>«Մեծ Հիմք» ԱԿ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>

«Մեծ Հիմք» ԱԿ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 04.05.2017թ. բողոքով հայտնել է, որ սույն թվականի ապրիլի 27-ին կայացել է «Երևանի հ. 180 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից հայտարարված «ԵՔ180ԴՊ-ՊԸԱՇՁԲ-17/01» ծածկագրով ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) հայտերի բացման նիստը:

«Մեծ Հիմք» ԱԿ-ն սահմանված կարգով մասնակցության հայտ է ներկայացրել Ընթացակարգին և առաջարկել ամենացածր գնային առաջարկը, սակայն Ընկերության հայտը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ Ընկերության կողմից սխալ է նշվել Ընթացակարգի ծածկագիրը:

Ընկերությունը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն անհիմն է մերժել հայտը հետևյալ պատճառաբանությամբ.

Ընթացակարգի հրավերը www.gnumner.am համացանցային կայքում հրապարակվելուց հետո, այն ենթարկվել է փոփոխության և առկա են մի քանի հրավերներ: Հայտը արդեն իսկ լրացրած լինելով՝ Ընկերությունը ուսումնասիրել է հրավերում կատարված փոփոխությունների մասին հայտարարությունը և պարզել, որ հրավերում կատարված փոփոխությունները չեն ենթադրում Ընկերության կողմից ներկայացվելիք հայտի փոփոխություն, ծածկագրի փոփոխության մասին ոչինչ նշված չէ: Ըստ այդմ՝ Ընկերությունը ներկայացրել է հայտը: Հետագայում պարզվել է, որ ի թիվս այլնի՝ ներկայացվող հայտի բովանդակությունը չփոփոխող փոփոխությունների, փոխվել է նաև մրցույթի ծածկագիրը՝ «ԵՔ180ԴՊ-ՊԸԱՇՁԲ-17/01»-ից դառնալով «ԵՔ180ԴՊ-ՊԸԱՇՁԲ-17/01-1», ինչի մասին հրավերի փոփոխության հայտարարության մեջ նշված չէ:

Ընկերությունը գտնում է, որ խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 31-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջը, այն է՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Հիմք ընդունելով Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ կետի 2-րդ մասը՝ Ընկերությունը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.04.2017թ. թիվ 3 արձանագրությունը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 12.05.2017թ. ժամը 15:00-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. «Երևանի հ. 180 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

«Երևանի հ. 180 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը 10.05.2017թ. թիվ 515 գրությամբ հայտնել է, որ «Մեծ Հիմք» ԱԿ-ի կողմից «ԵՔ180ԴՊ-ՊԸԱՇՁԲ-17/01» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ներկայացված բողոքն անհիմն է, քանի որ

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Ընկերության հայտը մերժել է օրենսդրության տառին համապատասխան:

Մասնավորապես, Ընկերության կողմից խախտվել է ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 44-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերության և նույն կետի 4-րդ ենթակետի պահանջները, որոնք արտացոլված են նաև ընթացակարգի հրավերի 7.3 կետում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժել է «Մեծ Հիմք» ԱԿ-ի կողմից ներկայացված հայտը:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից ներկայացված բողոքում նշված՝ Ընթացակարգի հրավերի փոփոխությանը, ապա Պատվիրատուն հայտնել է, որ այդ փոփոխության մեջ արտացոլված են պատճառները: Ընդ որում, հրավերի մեջ փոփոխությունը տեղի չի ունեցել ընթացակարգի ծածկագրի փոփոխության պատճառով, հետևաբար ծածկագրի փոփոխության մասին խոսք չի կարող լինել հրավերի փոփոխված տեքստում, քանի որ այն ուղղակի գնումների մասին օրենսդրության պահանջ է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 12.05.2017թ. ժամը 15:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերը նշված գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲԽ-ԱՄ-2017/02 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2017/02 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երևանի հ. 180 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից «Երևանի հ. 180 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար շենքի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է ***«ԵՔ180ԴՊ-ՊԸԱՇՁԲ-17/01» ծածկագրով պարզեցված ընթացակարգ***, որի վերաբերյալ հայտարարությունը և հրավերը www.gnumner.am համացանցային կայքում հրապարակվել են 07.04.2017թ.:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.04.2017թ. ժամը 09:30-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ որոշվել է «ԵՔ180ԴՊ-ՊԸԱՇՁԲ-17/01» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերում կատարել փոփոխություն, հաստատել ուսումնական շենքերի վերանորոգման նոր «ԵՔ180ԴՊ-ՊԸԱՇՁԲ-17/01-1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի տեքստը և հրապարակել այն՝ հաշվի առնելով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կատարված փորձաքննության առաջարկները:

3. 13.04.2017թ. www.gnumner.am համացանցային կայքում հրապարակվել է «ԵՔ180ԴՊ-ՊԸԱՇՁԲ-17/01» ծածկագրով ընթացակարգի հրավերի մեջ փոփոխություն կատարելու վերաբերյալ հայտարարություն, որում որպես պարզեցված ընթացակարգի ծածկագիր նշվել է «ԵՔ180ԴՊ-ՊԸԱՇՁԲ-17/01» և որով նախատեսվել է Ընթացակարգի հրավերի մեջ կատարվող փոփոխության պատճառները և փոփոխությունների համառոտ նկարագրությունը հետևյալ տեսքով.

«Փոփոխության պատճառ 1: Հրավերով նախատեսված հայտի <<Մասնագիտական փորձառություն>> հատվածը բացակայում էր:

Փոփոխության նկարագրություն: Հրավերով նախատեսված հայտի մեջ պետք է տեղ գտնի ՀՀ կառավարության 11.02.2011թ. որոշման կարգի 65-րդ կետի պահանջների արտացոլում:

Փոփոխության հիմնավորում: Վերը նշված որոշման կարգի 65-րդ կետի պահանջների բավարարում:

Փոփոխության պատճառ 2: Հրավերով նախատեսված հայտի <<տեխնիկական միջոցներ>> հատվածը բացակայում էր:

Փոփոխության նկարագրություն: Հրավերով նախատեսված հայտի մեջ պետք է տեղ գտնի ՀՀ կառավարության 11.02.2011թ. որոշման կարգի 66-րդ կետի պահանջների արտացոլում:

Փոփոխության հիմնավորում: Վերը նշված որոշման կարգի 66-րդ կետի պահանջների բավարարում:

Փոփոխության պատճառ 3: Հրավերով նախատեսված հայտի <<Ֆինանսական միջոցներ>> հատվածը բացակայում էր:

Փոփոխության նկարագրություն: Հրավերով նախատեսված հայտի մեջ պետք է տեղ գտնի ՀՀ կառավարության 11.02.2011թ. որոշման կարգի 67-րդ կետի պահանջների արտացոլում:

Փոփոխության հիմնավորում: Վերը նշված որոշման կարգի 65-րդ կետի պահանջների բավարարում:»:

4. 13.04.2017թ. www.gnumner.am համացանցային կայքում հրապարակված «ԵՔ180ԴՊ-ՊԸԱՇՁԲ-17/01» ծածկագրով ընթացակարգի հրավերի մեջ փոփոխություն կատարելու վերաբերյալ հայտարարությանը կցվել է «Երևանի հ. 180 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար շենքի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման

նպատակով հայտարարված հրավերը, որի վրա նշվել է ***«ԵՔ180ԴՊ-ՊԸԱՇՁԲ-17/01-1»*** ծածկագրով:

5. «Երևանի հ. 180 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից «Երևանի հ.180 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար շենքի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՔ180ԴՊ-ՊԸԱՇՁԲ-17/01» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Մեծ Հիմք» ԱԿ-ն:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 27.04.2017թ. ժամը 09:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետով մերժել է «Մեծ Հիմք» ԱԿ-ի հայտը այն պատճառաբանությամբ, որ Ընկերության հայտը չի համապատասխանում «ԵՔ180ԴՊ-ՊԸԱՇՁԲ-17/01» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով նախատեսված փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին, այն է՝ ծածկագրերը սխալ են լրացված:

4.<u>Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը</u>

Խորհուրդն, ուսումնասիրելով «Մեծ Հիմք» ԱԿ-ի 05.04.2017թ. բողոքը, «Երևանի հ. 180 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 10.05.2017թ. թիվ 515 գրությունը և կից փաստաթղթերը, www.gnumner.am համացանցային կայքում հրապարակված «ԵՔ180ԴՊ-ՊԸԱՇՁԲ-17/01» ծածկագրով ընթացակարգի հրավերը և դրանում կատարված փոփոխության մասին հայտարարությունը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բաց ընթացակարգով գնում կատարելու համար մասնակիցներ ներգրավելու նպատակով տեղեկագրում և http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակվում են գնումների հայտարարություն և հրավեր:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***հայտարարությունը պարունակում է բաց ընթացակարգի ծածկագիրը:***

Օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Բաց ընթացակարգի դեպքում փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում, իսկ սահմանափակ ընթացակարգի դեպքում փոփոխությունները տրամադրվում են հրավեր ստացած անձանց:

Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի և 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝

1. Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի կողմից հաստատված՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) հայտի ապահովումը.

4) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ), եթե հրավերով նախատեսված է.

5) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

2. Փաստաթղթային ձևով հայտը ներկայացվելու դեպքում մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձվում է այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և հրավերում նշված թվով պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում է բաց ընթացակարգի ծածկագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով

նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 44-րդ կետի 2-րդ, 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ հանձնաժողովը գնահատում է՝

ա.հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և բացում համապատասխանող գնահատված հայտերը,

բ. բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին.

3) հանձնաժողովի նախագահը հայտարարում է հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված հիմք ընդունելով տառերով գրվածը: Ընդ որում, թվաբանական սխալների հայտնաբերման դեպքում գնահատող հանձնաժողովը կատարում է սխալների ուղղում հետևյալ կարգով, եթե հայտնաբերված սխալը միավորի համար մասնակցի կողմից սահմանված միավորի գնի և տվյալ (առանձին) ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ընդհանուր քանակի սխալ բազմապատկման արդյունք է, ապա ուղղումը կատարվում է միավորի համար առաջարկված գնի պահպանմամբ (հիմք ընդունելով տառերով գրվածը)՝ փոխելով ապրանքի, աշխատանքի կամ ծառայության համար առաջարկված ընդհանուր գինը.

4) հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը կամ հայտի ապահովումը:

«Երևանի հ.180 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը «Երևանի հ.180 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար շենքի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է ***«ԵՔ180ԴՊ-ՊԸԱՇՁԲ-17/01»*** ծածկագրով պարզեցված ընթացակարգը, որի վերաբերյալ հայտարարությունը և հրավերը հրապարակվել են www.gnumner.am համացանցային կայքում:

13.04.2017թ. www.gnumner.am համացանցային կայքում հրապարակվել է ***«ԵՔ180ԴՊ-ՊԸԱՇՁԲ-17/01»*** ծածկագրով ընթացակարգի հրավերի մեջ փոփոխություն

կատարելու վերաբերյալ հայտարարություն, որում որպես պարզեցված ընթացակարգի ծածկագիր նշվել է «ԵՔ180ԴՊ-ՊԸԱՇՁԲ-17/01» և որով նախատեսվել է Ընթացակարգի հրավերի մեջ կատարվող փոփոխության պատճառները և փոփոխությունների համառոտ նկարագրությունը հետևյալ տեսքով.

«Փոփոխության պատճառ 1: Հրավերով նախատեսված հայտի <<Մասնագիտական փորձառություն>> հատվածը բացակայում էր:

Փոփոխության նկարագրություն: Հրավերով նախատեսված հայտի մեջ պետք է տեղ գտնի ՀՀ կառավարության 11.02.2011թ. որոշման կարգի 65-րդ կետի պահանջների արտացոլում:

Փոփոխության հիմնավորում: Վերը նշված որոշման կարգի 65-րդ կետի պահանջների բավարարում:

Փոփոխության պատճառ 2: Հրավերով նախատեսված հայտի <<տեխնիկական միջոցներ>> հատվածը բացակայում էր:

Փոփոխության նկարագրություն: Հրավերով նախատեսված հայտի մեջ պետք է տեղ գտնի ՀՀ կառավարության 11.02.2011թ. որոշման կարգի 66-րդ կետի պահանջների արտացոլում:

Փոփոխության հիմնավորում: Վերը նշված որոշման կարգի 66-րդ կետի պահանջների բավարարում:

Փոփոխության պատճառ 3: Հրավերով նախատեսված հայտի <<Ֆինանսական միջոցներ>> հատվածը բացակայում էր:

Փոփոխության նկարագրություն: Հրավերով նախատեսված հայտի մեջ պետք է տեղ գտնի ՀՀ կառավարության 11.02.2011թ. որոշման կարգի 67-րդ կետի պահանջների արտացոլում:

Փոփոխության հիմնավորում: Վերը նշված որոշման կարգի 65-րդ կետի պահանջների բավարարում:»:

Միևնույն ժամանակ նշված հայտարարությանը կցվել է «Երևանի հ. 180 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար շենքի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված հրավերը, որում ***«ԵՔ180ԴՊ-ՊԸԱՇՁԲ-17/01»*** ծածկագրի փոխարեն նշվել է ***«ԵՔ180ԴՊ-ՊԸԱՇՁԲ-17/01-1»*** ծածկագիրը:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Մեծ Հիմք» ԱԿ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 27.04.2017թ. ժամը 09:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետով մերժել է «Մեծ Հիմք» ՍՊԸ-ի հայտը պատճառաբանելով, որ Ընկերության հայտը չի համապատասխանում **«ԵՔ180ԴՊ-ՊԸԱՇՁԲ-17/01»** ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով նախատեսված փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին, այն է՝ ծածկագրերը սխալ են:

Մինչդեռ Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, վերը նշված հիմքով մերժելով Ընկերության հայտը, գործել է ոչ իրավաչափ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Բաց ընթացակարգի դեպքում փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում, իսկ սահմանափակ ընթացակարգի դեպքում փոփոխությունները տրամադրվում են հրավեր ստացած անձանց: Խորհուրդն արձանագրում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.04.2017թ. թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ համապատասխան փոփոխություններ են կատարվել «ԵՔ180ԴՊ-ՊԸԱՇՁԲ-17/01» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեքստում, որի վերաբերյալ հայտարարությունը 13.04.2017թ. հրապարակվել է www.gnumner.am համացանցային կայքում: Միևնույն ժամանակ Խորհուրդն արձանագրում է, որ հրավերում փոփոխություն կատարելու հետ միաժամանակ փոփոխության է ենթարկվել «Երևանի հ. 180 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար շենքի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ընթացակարգի ծածկագիրը, այն է՝ «ԵՔ180ԴՊ-ՊԸԱՇՁԲ-17/01» ծածկագրի փոխարեն նշվել է «ԵՔ180ԴՊ-ՊԸԱՇՁԲ-17/01-1» ծածկագիրը, որը և հիմք ընդունելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը:

Մինչդեռ Խորհուրդը գտնում է, որ «Երևանի հ. 180 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար շենքի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ընթացակարգն ի սկզբանե հայտարարված է եղել «ԵՔ180ԴՊ-ՊԸԱՇՁԲ-17/01» ծածկագրով և հրավերում կատարված համապատասխան փոփոխությունները, որոնք տվյալ դեպքում վերաբերում են հրավերի բովանդակությանը, ինքնին չեն կարող հանգեցնել Ընթացակարգի ծածկագրի փոփոխության: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Երևանի հ. 180 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար շենքի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՔ180ԴՊ-

ՊԸԱՇՁԲ-17/01» ընթացակարգը չկայացած չի հայտարարվել և դրա փոխարեն չի կազմակերպվել այլ ընթացակարգ, գտնում ենք, որ հրավերում փոփոխություններ կատարելու հիմքով Ընթացակարգի ծածկագրի փոփոխությունը և դրա հիման վրա մասնակցի հայտը մերժելը չի կարող դիտվել որպես իրավաչափ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Մեծ Հիմք» ԱԿ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 04.05.2017թ. ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Մեծ Հիմք» ԱԿ-ի 04.05.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել և դադարեցնել «ԵՔ180ԴՊ-ՊԸԱՇՁԲ-17/01» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.04.2017թ. թիվ 3 արձանագրությամբ կայացված «Մեծ Հիմք» ԱԿ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**